Արձանագրություն N 6
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ գովազդային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/12» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«26» «Հուլիս» 2019թ.
ժամը 18:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Լ. Բաբախանյան, Մ. Մնացականյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ.Սարգսյան

1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը «Ափ Սոլուշնզ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և 1-ին չափաբաժնի մասով՝ կայացված բանակցություններից հետո 2-րդ տեղ զբաղեցրած «Անտարես» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ կետով պայմանավորված առաջարկվել էր էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 30.07.2019թ. ժամը 18:00-ն ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

- «Անտարես» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են 26.07.19թ.

2. Ընթացակարգի ամփոփման մասին

(Մ.Մխիթարյան)

1. Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը և պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/12» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթողներ ճանաչել.

- «Անտարես» ՍՊԸ-ն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ 20,746,800 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

- «Ունիվերսալ Ինվեստ» ՍՊԸ-ն՝ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով՝ 17,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

✓ 2.Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, **որոշվեց** «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/12» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 2019 թվականի հուլիսի 27-ից մինչև 2019 թվականի հուլիսի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Լ.Բաբախանյան

---------- Մ. Մնացականյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան